## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-16/06-2 ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-16/06-2 ծածկագրով 2016թ-ի ապրիլի 19-ին կնքված պայմանագրում 2016թ-ի հոկտեմբերի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառը.**

Համաձայն 19.04.2016թ.-ին կնքված «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-16/06-2» ծածկագրով գնման պայմանագրի 9.5 կետի՝ ՀՀ կառավարության աշխատակազմը կազմակերպել է պայմանագրով նախատեսված ապրանքի ձեռքբերման «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-16/17» ծածկագրով գնման նոր ընթացակարգ: Ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորվել են ցածր միավորի գներ: Պայմանագրի կողմին դրանց մասով ներկայացվել է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Պայմանագրի կողմը ոչ բոլոր ապրանքների մասով է համաձայնել է նվազեցնել միավորի գները, ուստի՝ պայմանագիրը մասամբ լուծվում է՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

**Փոփոխության նկարագրություն.**

Պայմանագիրը մասամբ լուծվում է՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև նվազեցվում են որոշ ապրանքների միավորի գները:

**Փոփոխության հիմնավորում.**

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետը:

Պատվիրատու՝ ***<u>Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ</u>***

գնումների համակարգող՝ Հայկ Խաչատրյան

Հեռախոս՝ 010-51-59-89

Էլ. փոստ՝ gnumner@gov.am